«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Այգ-1 արևային ֆոտովոլտային ծրագիր»
ՀՆՀ No. SPP-A1/2020

Ֆինանսական առաջարկների գնահատում

Արձանագրություն N4

Ամսաթիվ՝ 21 մայիսի 2021 թ.

«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Այգ–1 արևային ֆոտովոլտային ծրագիր»

Ֆինանսական առաջարկների գնահատման նիստի արձանագրություն N4

21 մայիսի 2021 թ.
ՀՀ, ք. Երևան

Մասնակիցներ՝

Հակոբ Վարդանյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի նախագահ
Կարեն Բրուտյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ
Վահե Դանիելյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ
Վարոս Սիմոնյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ
Տիգրան Սիմոնյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ
Սերգեյ Աղինյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ
Զարուհի Ղարագյոզյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի պատասխանատու քարտուղար

«ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ–ի ներկայացուցիչներ (Գործարքի խորհրդատու)՝
Վահրամ Ավանեսյան
Մելիք Գասպարյան

Օրակարգ՝

«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Այգ–1 արևային ֆոտովոլտային ծրագրի» (ՀՆՀ No. SPP-A1/2020; ամսաթիվը՝ 21/12/2020) շրջանակում ստացված ֆինանսական առաջարկի գնահատման ամփոփում

Բաժին I. Ներածություն՝ ընտրության գործընթացը նախքան Ֆինանսական առաջարկների գնահատումը

1. Ներածություն	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (Պատվիրատու) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պահանջով անցկացնում է մասնավոր ընկերության կամ կոնսորցիումի ընտրության գործընթացը «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Այգ–1 արևային ֆոտովոլտային ծրագիր» (Ծրագիր) իրականացման համար՝ նախատեսված 200 ՄՎտ դրվածքային հզորությամբ, ցանցին միացված «Այգ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման նպատակով: Ծրագրի իրականացման համար նախատեսված տեղանքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների տարածքում: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2019 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված թիվ 1922-Լ որոշմամբ Ծրագիրը պետք է իրականացվի «Նախագծում, ֆինանսավորում, կառուցում, տնօրինում և շահագործում» (ՆՖԿՏՇ) սկզբունքով հատուկ նշանակության մեկ ընկերության կողմից (Ծրագրի ընկերություն), որը պետք է համատեղ պատկանի Ընտրված հայտատուին (85% սեփականություն) և ԱՆԻՖ-ին (15% սեփականություն) : Ծրագրի ընկերությունը պետք է հիմնադրվի և գրանցվի Հայաստանի Հանրապետությունում՝ Ծրագրի նպատակով:
2. Ընտրության գործընթացը (նախքան ֆինանսական գնահատումը)	Նախքան նախաորակավորման հայտերի (ՆՈՀ) ներկայացման վերջնաժամկետը, ՆՈՀ-եր ստացվել են հետևյալ 3 (երեք) հայտատուներից՝ 1. «Հիդրոչայնա Քորփորեյշն» ՍՊԸ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն 2. «Գազպրոմ Էներգոհոլդինգ» ՍՊԸ, Ռուսաստանի Դաշնություն 3. «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»): Կարճ ցուցակը կազմվել ծրագրի Նախաորակավորման Հրավերում (ՆՈՀ) նշված գնահատման չափանիշներին համապատասխան, որը հրապարակվել է 2020 թ.մայիսի 22-ին: Արդյունքում ՝ նախաորակավորման գործընթացում ներգրավված հետևյալ 3 (երեք) հայտատուները հայտարարվել են որպես նախաորակավորված հայտատուներ՝ 1. «Հիդրոչայնա Քորփորեյշն» ՍՊԸ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն 2. «Գազպրոմ Էներգոհոլդինգ» ՍՊԸ, Ռուսաստանի Դաշնություն 3. «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»):

	2020թ. դեկտեմբերի 21-ին Պատվիրատուն նախաորակավորում անցած վերոնշյալ 3 (երեք) հայտատուներին հրավիրեց ներկայացնելու հայտեր ԱՆՀ-ի մրցույթի համար: ԱՆՀ մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. փետրվարի 24-ը տեղական ժամանակով 15:00: Մրցութային (գնահատող) հանձնաժողովի որոշմամբ հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2021թ. ապրիլի 9-ը, տեղական ժամանակով 15:00: Նախքան հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալը ստացվել է 1 (մեկ) առաջարկ նախաորակավորում անցած հետևյալ հայտատուից՝ 1. «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») 2021թ. ապրիլի 7-ին (այսինքն՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը) մրցութային (գնահատող) հանձնաժողովը ստացել է պաշտոնական նամակ («Հետևանքի ծանուցում՝ Հայաստանում Այգ-1 արդյունաբերական մասշտաբի արևային ֆՎ ծրագիր»), թվագրված 2021թ.ապրիլի 5, «Գազպրոմ Էներգոհոլդինգ» ՍՊԸ-ի կողմից (նախաորակավորված հայտատու)՝ տեղեկացնելով, որ «...*«Գազպրոմ Էներգոհոլդինգ» ՍՊԸ-ն ծանուցում է ուղարկում Այգ-1 արդյունաբերական մասշտաբի արևային ֆՎ ծրագրի համար ընտրության գործընթացին մասնակցության վերաբերյալ առաջարկը հետ կանչելու մասին:»...».* «Հիդրոչայնա Քորփորեյշն» ՍՊԸ, Չինաստան, մասնակցության հայտ չի ներկայացրել: Հիմք ընդունելով Տեխնիկական առաջարկի գնահատման արդյունքները՝ Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը որոշել է «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») Նախաորակավորված հայտատուին որակել որպես Տեխնիկապես որակավորված և հրավիրել ֆինանսական առաջարկի բացմանը (հղումը՝ Տեխնիկական առաջարկների գնահատման նիստի արձանագրությունը, 23/04/2021 թ.)

Բաժին II. Ֆինանսական առաջարկի գնահատում

Ֆինանսական առաջարկի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի ապրիլի 23-ին: Ֆինանսական առաջարկի բացմանը հրավիրված Նախաորկավորված հայտատուի ներկայացուցիչները Ֆինանսական առաջարկի բացման նիստին մասնակցել են հեռավար կարգով՝ օգտագործելով Zoom հարթակը:

Ելնելով ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան առաջարկի ամբողջականության և համապատասխանության ստուգելու անհրաժեշտությունից՝ Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը գնահատել է ստացված Ֆինանսական առաջարկը: Գնահատման սկզբնական արդյունքները ամփոփված են ստորև բերվող աղյուսակում՝

Նախաորակավորված հայտատու՝ «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»)

	Չափանիշ	Հղում ՀՆՀ-ին	Թույլատրելի արժեք	Արժեք	Նշումներ
F.1	**Ֆինանսական առաջարկի գնահատում՝ ամբողջականություն**				
F.1.1	***Առաջարկի ներկայացում***				
F.1.1.1	Ֆինանսական ծրարը փակ է և դրոշմավորված	6.7.2.	Այո/Ոչ	Այո	
F.1.1.2	Ֆինանսական առաջարկի թղթային բնօրինակը ներկայացված է (1 օրինակ)	6.7.4.	Այո/Ոչ	Այո	
F.1.1.3	Ֆինանսական առաջարկի թղթային 1 պատճենը ներկայացված է	6.7.4.	Այո/Ոչ	Այո	
F.1.1.4	Ներկայացված է միայն մեկ ֆինանսական առաջարկ	6.3.1	Այո/Ոչ	Այո	
F.1.1.5	Ֆինանսական առաջարկը ստորագրված է	6.3.3	Այո/Ոչ	Այո	
T.1.1.6	Ֆինանսական առաջարկի բոլոր էջերը ստորագրված են	6.3.3	Այո/Ոչ	Այո	
F.1.2	***Ֆինանսական առաջարկի պարունակություն***				
F.1.2.1	Ամբողջապես լրացված և ստորագրված Ֆինանսական առաջարկի ներկայացման ձևաչափ	6.3.5	Այո/Ոչ	Այո	
F.1.2.2	Ամբողջապես լրացված և ստորագրված Ֆինանսական առաջարկի ներկայացման ձևաչափ	6.3.5	Այո/Ոչ	Այո	
F.2	**Ֆինանսական առաջարկների գնահատում՝ համապատասխանություն**				
F.2.1	Ֆինանսական առաջարկը ներկայացվել է ըստ ՀՆՀ-ի սահմանված ձևաչափի	6.3.2; 6.3.5; Ենթաբաժին 9.2	Այո/Ոչ	Այո	1
F.2.2	Հիմնական տեխնիկական և ֆինանսական մուտքային պարամետրերը ներկայացվել են ըստ ՀՆՀ-ի սահմանված ձևաչափի	6.3.2; 6.3.5; Ենթաբաժին 9.3	Այո/Ոչ	Այո	2
F.2.3	Ներառված որևէ լրացուցիչ հոդված/պայմանականություն	6.3.2	Այո/Ոչ	Այո	
F.2.4	Ֆինանսական առաջարկը ստորագրված է լիազորված անձի կողմից	6.3.3(i)	Այո/Ոչ	Այո	
F.2.5	Հայտի վավերականանության ժամկետ (240 օր)	ՄՏԹ; Ենթաբաժին 9.2	Այո/Ոչ	Այո	3
F.2.6	Հայտով Առաջարկված Սակագին (ԱՄՆ դոլար/կվտ.ժ) (մինչև 4 տասնորդական կետով)	Ենթաբաժին 9.2	Կ/Չ	0.0337	4

Նշումներ

1. Որոշակի թերություններ են նկատվել Հայտով Առաջարկված Սակագինը բառերով ներկայացման մեջ: 2021 թ. մայիսի 5-ին, Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը այդ մասին ծանուցել է Նախաորակավորված հայտատուին՝ պահանջելով շտկել նշված թերությունը և կրկին ներկայացնել Ֆինանսական առաջարկի ներկայացման ձևաչափը:

2. Բացահայտել են որոշ թվային անհամապատասխանություններ ձևաչափով ներկայացված 11-րդ (Projected CAPEX, total), 12-րդ (Direct CAPEX) և 16-րդ (Balance of system cost) ցուցանիշների գծով: Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը նկատել է, որ Հիմնական տեխնիկական և ֆինանսական մուտքային պարամետրերի ներկայացման ձևաչափում «ԱՄՆ դոլար/Վատտ»-ով արտահայտված ցուցանիշները Նախաորակավորված հայտատուի կողմից չեն ներկայացվել մինչև 4 տասնորդական նիշով, ինչպես նախատեսված է Հայտերի ներկայացման հրավերով: 2021

Չափանիշ	Հղում ՀՆՀ-ին	Թույլատրելի արժեք	Արժեք	Նշումներ
թ. մայիսի 5-ին, Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը այդ մասին ծանուցել է Նախաորակավորված հայտատուին՝ պահանջելով շտկել նշված անհամապատասխանությունները և կրկին ներկայացնել Հիմնական տեխնիկական և ֆինանսական մուտքային պարամետրերի ներկայացման ձևաչափը: Նույն օրը Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը Նախաորակավորված հայտատուից պահանջել է նաև ներկայացնել Հայտով Առաջարկված Սակագնի և Հիմնական տեխնիկական և ֆինանսական մուտքային պարամետրերի միջև համապատասխանությունը հիմնավորող լրացուցիչ տեղեկատվություն՝ նկատի ունենալով, որ ՀՆՀ-ի փաստաթղթերին համապատասխան, որոշ հիմնական տեխնիկական և ֆինանսական պարամետրեր (մասնավորապես՝ ընդամենը ծրարգրվող կապիտալ ծախսեր (Projected CAPEX, total)) պետք է մուտքագրվեն Կառավարության աջակցության համաձայնագրում, ինչպես նախատեսված ՀՆՀ-ի Ենթաբաժին 9.6-ով: 3. ՄՏԹ=Մրցույթի տեղեկատվական թերթիկ. 4. 2021 թ. մայիսի 11-ին, Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը, հղում անելով ՀՀ կառավարությունը 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1922-Լ որոշմամբ հավանության է արժանացած «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրի՝ սակագներին վերաբերող դրույթներին, լրացուցիչ պահանջել է Նախաորկավորված հայտատուից դիտարկել Ֆինանսական առաջարկը կրկին ներկայացնելու հնարավորությունը՝ առաջարկելով վերոհիշյալ որոշմամբ ամրագրված սակագնից ավելի ցածր Հայտով Առաջարկված Սակագին:				

Ի պատասխան Մրցութային (Գնահատող) հանձնաժողովի՝ ներկայացված առաջարկի վերաբերյալ պարզաբանումներ պահանջելու մասին 2021 թ. մայիսի 5-ի և 2021 թ. մայիսի 11-ի ծանուցումների՝ Տեխնիկապես որակավորված Նախաորակավորված հայտատուն 2021 թ. մայիսի 14-ին էլեկտրոնային փոստով ներկայացրել է վերանայված Ֆինանսական առաջարկ (թվագրված՝ 13 մայիս 2021 թ.), որը ներառել է՝

(i) լրացված Ֆինանսական առաջարկի ներկայացման ձևաչափը՝ ըստ ՀՆՀ-ի Ենթաբաժին 9.2.-ում ներկայացված ձևաչափի.

(ii) լրացված Հիմնական տեխնիկական և ֆինանսական մուտքային պարամետրերի ձևաչափը՝ ըստ ՀՆՀ-ի Ենթաբաժին 9.3.-ում ներկայացված ձևաչափի:

Բացի այդ, Տեխնիկապես որակավորված Նախաորակավորված հայտատուն ներկայացրել է նաև վերանայված Հայտի ներկայացման գրությունը՝ ըստ ՀՆՀ-ի Ենթաբաժին 9.1-ի ձևաչափի, ծանուցելով Պատվիրատուին ավելի ցածր սակագին առաջարկելու(ինչպես պահանջվել էր) իր պատրաստակամության մասին՝ պայմանով, որ Ֆինանսական ամփոփման վերջնաժամկետը հետաձգվի Ստորագրման ամսաթվից հետո մինչև 545 Օր՝ նախատեսված 180 Օրվա փոխարեն

Ելնելով ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան առաջարկի ամբողջականության և համապատասխանության ստուգելու անհրաժեշտությունից՝ Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը գնահատել է ստացված վերանայված Ֆինանսական առաջարկը: Գնահատման արդյունքները ամփոփված են ստորև բերվող աղյուսակում՝

Նախաորակավորված հայտատու՝ «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»)

	Չափանիշ	Հղում ՀՆՀ-ին	Թույլա տրելի արժեք	Արժեք	Նշումներ
F.1	**Ֆինանսական առաջարկի գնահատում՝ ամբողջականություն**				
F.1.1	***Առաջարկի ներկայացում***				
F.1.1.1	Ֆինանսական ծրարը փակ է և դրոշմավորված	6.7.2.	Այո/Ոչ	Այո	
F.1.1.2	Ֆինանսական առաջարկի թղթային բնօրինակը ներկայացված է (1 օրինակ)	6.7.4.	Այո/Ոչ	Այո	
F.1.1.3	Ֆինանսական առաջարկի թղթային 1 պատճենը ներկայացված է	6.7.4.	Այո/Ոչ	Այո	
F.1.1.4	Ներկայացված է միայն մեկ ֆինանսական առաջարկ	6.3.1	Այո/Ոչ	Այո	
F.1.1.5	Ֆինանսական առաջարկը ստորագրված է	6.3.3	Այո/Ոչ	Այո	
T.1.1.6	Ֆինանսական առաջարկի բոլոր էջերը ստորագրված են	6.3.3	Այո/Ոչ	Այո	
F.1.2	***Ֆինանսական առաջարկի պարունակություն***				
F.1.2.1	Ամբողջապես լրացված և ստորագրված Ֆինանսական առաջարկի ներկայացման ձևաչափ	6.3.5	Այո/Ոչ	Այո	
F.1.2.2	Ամբողջապես լրացված և ստորագրված Ֆինանսական առաջարկի ներկայացման ձևաչափ	6.3.5	Այո/Ոչ	Այո	
F.1.E	**Ֆինանսական առաջարկն ամբողջական է**		**Այո/Ոչ**	**Այո**	
F.2	**Ֆինանսական առաջարկների գնահատում՝ համապատասխանություն**				
F.2.1	Ֆինանսական առաջարկը ներկայացվել է ըստ ՀՆՀ-ի սահմանված ձևաչափի	6.3.2; 6.3.5; Ենթաբաժին 9.2	Այո/Ոչ	Այո	
F.2.2	Հիմնական տեխնիկական և ֆինանսական մուտքային պարամետրերը ներկայացվել են ըստ ՀՆՀ-ի սահմանված ձևաչափի	6.3.2; 6.3.5; Ենթաբաժին 9.3	Այո/Ոչ	Այո	
F.2.3	Ներառված որևէ լրացուցիչ հոդված/պայմանականություն	6.3.2	Այո/Ոչ	Այո	1
F.2.4	Ֆինանսական առաջարկը ստորագրված է լիազորված անձի կողմից	6.3.3(i)	Այո/Ոչ	Այո	
F.2.5	Հայտի վավերականանության ժամկետ (240 օր)	ՄՏԹ; Ենթաբաժին 9.2	Այո/Ոչ	Այո	2
F.2.6	Հայտով Առաջարկված Սակագին (ԱՄՆ դոլար/կվտ.ժ) (մինչև 4 տասնորդական կետով)	Ենթաբաժին 9.2	Կ/Չ	0.0290	
F.2.E	**Ֆինանսական առաջարկը համապատասխանում է ներկայացվող պահանջներին**		**Այո/Ոչ**	**Այո**	
REC.:	**Նախաորակորված հայտատուի հայտը երաշխավորվում է ընդհանուր գնահատման**	**7.6.1**	**Այո/Ոչ**	**Այո**	

Նշումներ

1. Տեխնիկապես որակավորված Նախաորակավորված հայտատուն ներկայացրել է նաև վերանայված Հայտի ներկայացման գրությունը՝ ըստ ՀՆՀ-ի Ենթաբաժին 9.1-ի ձևաչափի, ծանուցելով Պատվիրատուին ավելի ցածր սակագին առաջարկելու (ինչպես պահանջվել էր) իր պատրաստակամության մասին՝ պայմանով, որ Ֆինանսական ամփոփման վերջնաժամկետը հետաձգվի Ստորագրման ամսաթվից հետո մինչև 545 Օր՝ նախատեսված 180 Օրվա փոխարեն

2. ՄՏԹ=Մրցույթի տեղեկատվական թերթիկ.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ (ԳՆԱՀԱՏՈՂ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ

Հիմք ընդունելով ստացված Տեխնիկական և Ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքները՝ Մրցութային (Գնահատող) հանձնաժողովը որոշեց՝

(i) Արձանագրել, որ ՝ «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») Տեխնիկապես որակավորված Նախաորակավորված հայտատուն առաջարկել է Հայտով Առաջարկված Սակագնի 0.0290 ԱՄՆ դոլար/կՎտժ մեծություն, որը ներառում է բոլոր հարկերը և տուրքերը (բացառությամբ ավելացված արժեքի հարկի) կիրառելի օրենքի համաձայն.

(ii) «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ-ին («Մասդար») որակել որպես Նախընտրելի հայտատու.

(iii) Նախընտրելի հայտատուին հրավիրել բանակցությունների:

Հակոբ Վարդանյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի նախագահ

Կարեն Բրուտյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ

Վահե Դանիելյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ

Վարոս Սիմոնյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ

Տիգրան Սիմոնյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ

Սերգեյ Աղինյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի անդամ

Զարուհի Ղարագյոզյան, Մրցութային (գնահատող) հանձնաժողովի պատասխանատու քարտուղար